ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ընդդեմ «Հայաստանի հանրային հեռուստաընկերության» «Լուրերի»՝ փաստաբան Արամ Օրբելյանի դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել փաստաբան Արամ Օրբելյանը՝ ընդդեմ «Հայաստանի հանրային հեռուստատեսություն» ՓԲ ընկերության՝ 2020թ. հունվարի 30-ին «Լուրերի» գլխավոր թողարկման ընթացքում հեռարձակված «Քոչարյանի պաշտպանի ՍԴ մտնելու հետևանքները» վերնագրով[1] նյութի (հեղինակ՝ Գ. Թոսունյան): Ըստ բողոքի հեղինակի՝ հրապարակման մեջ խախտված են «Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» մի քանի դրույթներ:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. Հայաստանի հանրային հեռուստատեսության 2020թ. հունվարի 30-ի «Լուրերի» գլխավոր թողարկման ընթացքում հեռարձակվել է «Քոչարյանի պաշտպանի ՍԴ մտնելու հետևանքները» վերնագրով նյութը, որում հեղինակը, հղում կատարելով ԱԱԾ հաղորդագրությանը, անդրադարձել է 2019թ. մայիս-օգոստոս ամիսներին Մարտի 1-ի գործով մեղադրյալ, ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի փաստաբան Արամ Օրբելյանի՝ ՀՀ Սահմանադրական դատարան կատարած այցերին:

2. 2020թ. մարտի 6-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն ստացել է Արամ Օրբելյանի ներկայացուցիչ Նարինե Բեգլարյանի դիմումը, որում մատնանշված են նաև «Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների

[1] Տվյալ դեպքում որպես վերնագիր է ծառայում հեռուստատեսային ռեպորտաժի գլխագիրը, որն ամբողջ ռեպորտաժի ընթացքում, որպես տիտր, առկա է տեսանյութում:

կանոնագրի» այն դրույթները, որոնք դիմումատուի կարծիքով, խախտված են վերոնշյալ ռեպորտաժում։ Մասնավորապես՝

ա) «ճշգրտության և անկողմնակալության սկզբունքը այն մասով, որ մասով լրատվամիջոցը և լրագրողը.

- մինչև հրապարակումը չեն ստուգել աղբյուրից ստացված տեղեկության հավաստիությունը՝ (…) չապահովելով նաև անկողմնակալությունը նյութի հավասարակշիռ ներկայացման միջոցով,
- կոծկել (…) և (…) խեղաթյուրել են (…) փաստերը,
- հրապարակել են ակնհայտ կեղծ տեղեկություններ,
- չեն ապահովել, որ նյութի վերնագիրը բխի նյութի բովանդակությունից,
- մեջբերումները օգտագործել են համատեքստից դուրս,
- չի սահմանազատված փաստը և տեղեկությունները՝ կարծիքից և վերլուծություններից,

բ) մարդկանց անձնական կյանքի և այլ իրավունքների նկատմամբ հարգանքի սկզբունքը այն մասով, որ չի պահպանվել անմեղության կանխավարկածը (…)»։

3. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի անդամները, նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիմողը նույն նյութի կապակցությամբ զրպարտության հիմքով դիմել է նաև Երևանի ընդհանուր իրավասության դատարան, 2020թ. ապրիլի 21-ին առցանց քննարկեցին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի աշխատակարգին դիմումի համապատասխանության հարցը և քվեարկությամբ ընդունեցին այն վարույթ։

4. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը, 2020թ. ապրիլի 24-ի նիստում անցկացնելով բողոքի առցանց քննարկումը, արձանագրեց, որ կարիք ունի Հանրային հեռուստատեսության որոշ պարզաբանումների և ապրիլի 27-ին համապատասխան նամակով դիմեց Հայաստանի հանրային հեռուստատեսության լրատվական ծառայության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռուբեն Շահինյանին։ Նամակի պատճեններն ուղարկվեցին Հայաստանի Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Արա Շիրինյանին, Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Սարգսյանին։

ԴՄ-ն կատարել էր հետևյալ հարցադրումները՝ 1. Լրագրողի կողմից ինչպե՞ս են ձևակերպվել Արամ Օրբելյանին ուղղված հարցը կամ հարցերը (խնդրանքով՝ հնարավորինս ճշգրիտ փոխանցել դրանց բովանդակությունը)։ 2. Ո՞ւմ նախաձեռնությամբ և ի՞նչ եղանակով է ՀՀ ԱԱԾ-ից ստացվել նյութում մեջբերված ԱԱԾ-ի հաղորդագրությունը։ 3. Արդյո՞ք Հանրային ՀԸ կողմից գործադրվել են ջանքեր՝ այլ աղբյուրներից (բացի Արամ Օրբելյանից) ստանալու ԱԱԾ-ի հաղորդագրության մեջ եղած տեղեկատվության վերաբերյալ մեկնաբանություններ։ 4. Արդյո՞ք ԱԱԾ-ի հաղորդագրությամբ հստակ ներկայացվում է, ում նկատմամբ է իր կողմից իրականացվում նախաքննություն (խնդրանքով՝ հնարավորության դեպքում ԴՄ-ին տրամադրել հաղորդագրությունը ամբողջությամբ)։

5. 2020թ. մայիսի 5-ին ԴՄ-ն ստացել է Ռ. Շահինյանի պարզաբանումները։ Մասնավորապես, Ռ. Շահինյանը նշել է, որ Ա. Օրբելյանին լրագրողը տվել է հետևյալ հարցերը՝

- «Ազգային անվտանգության ծառայությունը Լուրերի գրավոր հարցմանն ի պատասխան պաշտոնապես տեղեկացրել է, որ 2019թ. մայիսից օգոստոսն ընկած ժամանակահատվածում պարբերաբար այցելել եք Սահմանադրական դատարան. խնդրում եմ մեկնաբանել այս տեղեկատվությունը»,

- «2019թ. մայիսին առաջին ատյանի դատարանի դատավոր Դավիթ Գրիգորյանը կասեցրեց մարտի 1-ի քրեական գործի վարույթը և այն ուղարկեց Սահմանադրական դատարան Քոչարյանին մեղսագրվող հոդվածի սահմանադրականությունը որոշելու խնդրանքով. Մինչ Սահմանադրական դատարանի կողմից տվյալ դիմումի քննությունը սկսելն այցելել եք արդյոք Սահմանադրական դատարան, եթե՝ այո, ներկայացրել եք անձը հաստատող փաստաթուղթ և Ձեր մուտքերը ոստիկանների կողմից հաշվառվել են, թե՝ ոչ»:

Մյուս երեք հարցերին Ռ. Շահինյանը տվել է հետևյալ պատասխանները.

- «Նյութում մեջբերված Ազգային անվտանգության ծառայության պատասխանը ձեռք է բերվել Հանրային հեռուստաընկերության լրատվական ծառայության նախաձեռնությամբ՝ գրավոր հարցման հիման վրա։

- Այո։ Ռեպորտաժի հեղինակը կապ է հաստատել նաև Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար Էդգար Ղազարյանի հետ։ Հեռախոսազրույցի ընթացքում

Էդգար Ղազարյանին լրագրողը հայտնել է, որ Ազգային անվտանգության ծառայության գրավոր պատասխանի համաձայն՝ Ռոբերտ Քոչարյանի պաշտպան Արամ Օրբելյանը 2019թ. մայիսից օգոստոսն ընկած ժամանակահատվածում այցելել է Սահմանադրական դատարան: Նա խնդրել է մեկնաբանություն տալ, սակայն Էդգար Ղազարյանը հրաժարվել է բանավոր մեկնաբանել և առաջարկել է հարցերն ուղարկել գրավոր: Լրագրողը կազմել է գրավոր հարցում, մեջբերել է Ազգային անվտանգության ծառայության պաշտոնական պատասխանը և խնդրել պարզաբանել, թե ինչ նպատակով է Արամ Օրբելյանն այցելել Սահմանադրական դատարան, այդպիսի այցերի ընթացքում հանդիպել է արդյոք Սահմանադրական դատարանի նախագահին և ինչու չեն հաշվառվել Սահմանադրական դատարան Արամ Օրբելյանի մուտքերը: Վերոշարադրյալ հարցերի բովանդակությամբ Հանրային հեռուստաընկերության լրատվական ծառայության գրավոր հարցումը Սահմանադրական դատարանի կողմից մնացել է անպատասխան:

- Այո: Ազգային անվտանգության ծառայությունը հստակ նշում է, որ գլխավոր դատախազությունից 2019թ. հոկտեմբերի 25-ին ստացել է գրություն՝ Արամ Օրբելյանի ՍԴ այցելելու և Հրայր Թովմասյանի հետ գաղտնի հանդիպումների մասին մամուլի հրապարակումների վերաբերյալ, ինչի առթիվ ԱԱԾ քննչական դեպարտամենտում նախապատրաստվել են նյութեր, սակայն երեք օր անց քրեական գործի հարուցումը մերժվել է՝ ոստիկանների գործողություններում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Այսինքն, ուսումնասիրություններն իրականացվել են Սահմանադրական դատարանի ոստիկանների նկատմամբ»:

Լրատվական ծառայության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը նաև գրել է.

«Ինչ վերաբերում է Ազգային անվտանգության ծառայությունից ստացված գրությունը Դիտորդ մարմնին տրամադրելուն, նշենք, որ այս պահին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննության է առնվում ԵԴ/7978/02/20 քաղաքացիական գործն ըստ հայցի Արամ Օրբելյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության, ի դեմս՝ Ազգային անվտանգության ծառայության և Հանրային հեռուստաընկերության՝ զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալները հերքելու և զրպարտությամբ պատճառված վնասը

փոխհատուցելու պահանջների մասին: Տվյալ հայցի հարուցման առիթը քննարկվող ռեպորտաժն է, ուստի, Հանրային հեռուստաընկերությունը Ազգային անվտանգության ծառայությունից ստացված գրությունը կտրամադրի միայն դատարանին՝ վերջինիս կողմից այդպիսի պահանջի սահմանման դեպքում»:

6. Դիտորդ մարմինը դիմեց նաև բողոքող կողմի ներկայացուցիչ Ն. Բեգլարյանին՝ հարցադրումով՝ արդյո՞ք փորձել են օգտվել հերքում հրապարակելու իրենց իրավունքից:

Վերջինս տեղեկացրեց, որ չեն փորձել՝ զրպարտության համար դատական կարգով պատասխան պահանջելու ժամկետները բաց չթողնելու նպատակով:

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք

Հոդված 1087.1. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները

1. Անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:
(…)
3. Զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:
(…)
8. Զրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

II. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք

Հոդված 8. Հերքման և պատասխանի իրավունքը

1. Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը:

III. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր

1.1. մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել և չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ,

1.3. հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից,

1.4. վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա,

1.5. ձգտել, որ հաղորդագրությունները, լուսանկարային, տեսագրված ու ձայնագրված նյութերը համապատասխանեն իրականությանը, վերնագրերը բխեն նյութի բովանդակությունից, չչարաշահվեն հանրային դեմքերի և սովորական մարդկանց անձնական տվյալների համընկնումները, մեջբերումները չօգտագործվեն համատեքստից դուրս,

2.1. հնարավորինս նշել տեղեկությունների աղբյուրները,

4.1. պաշտպանել մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ներառյալ՝ հարգանքն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի, սեփականության, առողջության և նամակագրության նկատմամբ,

4.7. պահպանել անմեղության կանխավարկածը. մինչև դատաքննությունը հանցագործության մեջ կասկածվողների անունները հրապարակելիս քննարկել դրա հասարակական անհրաժեշտությունը՝ հավասարակշռություն պահպանելով անմեղության կանխավարկածի, հանցագործության մեջ կասկածվողների՝ արդար դատաքննության իրավունքի և հասարակության՝ տեղեկացված լինելու իրավունքի միջև:

Գ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

քննարկելով

ընդդեմ «Հայաստանի հանրային հեռուստաընկերության» «Լուրերի» ՝ փաստաբան Արամ Օրբելյանի բողոքը,

ի գիտություն ընդունելով

Հայաստանի հանրային հեռուստատեսության լրատվական ծառայության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռուբեն Շահինյանի պատասխանը ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հարցմանը,

նկատի առնելով, որ

նշված ժամանակահատվածում Սահմանադրական դատարան Արամ Օրբելյանի այցելությունների կապակցությամբ դատական վարույթ է իրականացվում, և այդ փաստի հաստատումը կամ հերքումը դատարանի իրավասության ներքո է,

արձանագրում է.

1. Հայաստանի հանրային հեռուստատեսության 2020թ. հունվարի 30-ի «Լուրերի» գլխավոր թողարկման ընթացքում հեռարձակված «Քոչարյանի պաշտպանի ՍԴ մտնելու հետևանքները» վերնագրով նյութը պատրաստելիս խմբագրությունը դիմել է խնդրին առնչվող հիմնական կողմերին՝ Արամ Օրբելյանին, ՀՀ ԱԱԾ-ին, ինչպես նաև, համաձայն ՀՀՀ լրատվական ծառայության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պատասխանի, կապ է հաստատել Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի հետ՝ այդպիսով ապահովելով տարբեր աղբյուրներից փաստերը ճշտելու պահանջը: Սահմանադրական դատարան Ա. Օրբելյանի ենթադրյալ այցելությունների փաստի վերաբերյալ Հանրային հեռուստատեսության կողմից հիշատակման համար ԱԱԾ-ից ստացված գրությունը բավարար հիմք է հանդիսանում, մանավանդ որ ռեպորտաժում ներառված են նաև Ա. Օրբելյանի մեկնաբանությունները դրա վերաբերյալ: Հետևաբար՝ Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 1.1 կետի խախտում առկա չէ:

2. Նյութում ԱԱԾ-ից ստացված գրությունից մեջբերումներն արված են տեղին և բխում են նյութի բովանդակությունից: Հետևաբար՝ Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների

էթիկական սկզբունքների կանոնագրի 1.5 կետի խախտում այդ մասով առկա չէ։

3. Բուն ռեպորտաժում լսարանի համար հասկանալի կերպով ներկայացվել է, որ ԱԱԾ քննության առարկա եղել են ոստիկանության գործողությունները, իսկ Արամ Օրբելյանին կամ որևէ այլ անձի կոնկրետ ձևակերպված մեղադրանք չի ներկայացվել։ Հետևաբար՝ Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 4.7 կետի խախտում առկա չէ։

4. Բուն ռեպորտաժում բացակայում են կարծիքն ու վերլուծությունը։ Վերջինների վերաբերյալ ակնարկները առկա են վերնագրում և հաղորդավարի բացման խոսքում, հետևաբար բողոքում նշված փաստերը և կարծիքները չսահմանազատելու ու Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 1.3 կետի խախտման վերաբերյալ պնդումը բավարար հիմքեր չունի։

5. Նյութում չկա անձնական կյանքի միջամտություն, քանի որ այն Ա. Օրբելյանի՝ ՀՀ Սահմանադրական դատարան, այլ ոչ՝ մասնավոր տարածք ելումուտի մասին էր, և այդ փաստը կարող էր հանրային հետաքրքրություն ներկայացնել։ Հետևաբար՝ Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 4.1 կետի խախտում առկա չէ։

6. Միևնույն ժամանակ ռեպորտաժի վերնագիրը՝ **«Քոչարյանի պաշտպանի ՍԴ մտնելու հետևանքները»,** և «Լուրերի» հաղորդավարի բացման խոսքը չեն բխում հիմնական նյութի բովանդակությունից։ Ավելին՝ դրանք նաև ուղղորդող բնույթ ունեն, ինչը ամբողջ նյութին հաղորդում է որոշակի մանիպուլյատիվ բնույթ։ Ռեպորտաժում չեն բերվում փաստեր կամ մեկնաբանություններ վերնագրում և բացման խոսքում հիշատակած հետևանքների մասին։ Այս մասով խախտվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրի 1.5 դրույթը, ինչի հետևանքով կարող էր վնաս հասցվել փաստաբանի մասնագիտական և անձնական համբավին։

ԶԼՄ-ների ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆՆ իրեն իրավունք է վերապահում վերոնշյալ հարցով դատարանի որոշումից հետո կրկին անդրադառնալու Ա. Օրբելյանի բողոքին, եթե, համաձայն Աշխատակարգի 4.16 կետի, դատարանի վճիռը չի բավարարի կամ մասամբ կբավարարի անձին, և նա կդիմի քննությունը վերսկսելու խնդրանքով։ Կողմերից մեկի նախաձեռնությամբ բողոքը կարող է քննարկվել նաև այն դեպքում, եթե դատարանի որոշման արդյունքում ի հայտ գան հանգամանքներ, որոնք հիմք կպարունակեն սույն եզրակացության բովանդակությունը վերանայելու կամ լրացնելու համար։

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հորդորում է Արամ Օրբելյանին՝ նման դեպքերում օգտվել «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ պատասխանի հրապարակման իրավունքից:

Դիտորդ մարմինը հարկ է համարում հիշեցնել, որ Կանոնագիրը ստորագրած լրատվամիջոցների ներկայացուցիչները, ընդունելով իրենց իսկ կողմից ընտրված Դիտորդ մարմնի իրավասությունը՝ քննելու իրենց գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը Կանոնագրի դրույթներին, պատրաստակամություն են հայտնել՝ ԴՄ-ի որոշումը հրապարակելու իրենց լրատվամիջոցներում:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի
2020թ. մայիսի 12-ի նիստում,
ԴՄ հետևյալ կազմով՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 47-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: